

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**2017թ. II եռամսյակի ընթացքում ԼՂՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի**

**իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության գործունեության
վերաբերյալ**

2017թ. II եռամսյակի ընթացքում իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել համակարգին վերապահված խնդիրների իրականացման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 48 առևտրային և 6 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 102-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 4-ի գործունեությունը դադարեցվել է:

1 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում և 2 հիմնարկ ենթարկվել են ընթացիկ պետական հաշվառման:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 286 անհատ ձեռնարկատեր, 31-ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 9-ի գործունեությունը դադարեցվել է:

Ըստ շրջանների գրանցման գործընթացի իրավիճակը բնութագրվում է հետևյալ կերպ.

անվանում	իրավաբանական անձ				իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ				անհատ ձեռնարկատեր				ընդամենը	պետ. տուրք (հազ. դրամ)
	սկզբ	վերագ.	ընթ.	լուծ. (դադար.)	սկզբ	վերահ.	ընթ.	լուծ	սկզբ.	վերահ	ընթ.	գործ. դադար		
<i>Կենտրոնական մարմին</i>	6		15	2									23	142
<i>Ստեփանակերտ</i>	41		66				1		160		21	6	295	1610,5
<i>Սսկերան</i>	1		5						22		7	2	37	121,5
<i>Հաղբուժ</i>	3		1						19		1		24	115,5
<i>Մարտակերտ</i>			1						38				39	119
<i>Մարտունի</i>	1		6	2					24			1	34	124
<i>Շուշի</i>			2						9		2		13	41
<i>Քաշաթաղ</i>	2		6				2		14				24	122

<i>Հնդամեն ը</i>	54		102	4			3		286		31	9	489	2395, 5
----------------------	----	--	-----	---	--	--	---	--	-----	--	----	---	-----	------------

Պետական միասնական գրանցամատյանից տրվել է 159 տեղեկանք:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 2 554 500 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում II եռամսյակում արտաբյուջե է մտցվել 327 000 դրամ:

Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել սպառիչ պատասխաններ:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից սիստեմատիկ հսկողություն է իրականացվել պետական ռեզիստրի կառուցվածքային ստորաբաժանման նկատմամբ, տրվել ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ:

Գործակալության պետի ժ/պ՝ Դ.Դավթյան